Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 7

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 14-ը՝ Նորիկ Անդրեասյանը, Տիգրան Գալստյանը, Ազատ Զաքարյանը, Արտաշես Խաչատրյանը, Աշոտ Հունանյանը, Վահագն Մկրտչյանը, Կարեն Շահազիզյանը, Սամվել Շուխյանը, Նավասարդ Պետրոսյանը, Արմենակ Սարգսյանը, Բաբկեն Վարդանյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը, Սարիբեկ Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Գ. Եղիազարյանն ու Վ. Սաֆարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը, աշխատակազմի բաժինների պետեր Ա. Խաչատրյանը, Ս. Ղազարյանը, Ա. Մնացականյանը /ժ/պ/, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Ս. Սահակյանը, առաջատար մասնագետ Ա. Գրիգորյանը, ՀՈԱԿ-ների տնօրեններ Պ. Զոհրաբյանն ու Է. Մելիքյանը, <Զոր> ՓԲԸ-ի և <ՇԱՀ-ԱՐԵՎԻԿ> ՍՊԸ-ի ներկայացուցիչներ:

Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

1. Էդգար Մելիքյանին <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին:

   /Զեկուցող՝ Զ. Գևորգյան/

2. Աշտարակ քաղաքի Քասախի կիրճում գտնվող <ԶՈՐ> ՓԲԸ-ին ծառերի հատում, շիվահատում և սանիտարական էտ կատարելու թույլտվություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

3. Աշտարակ քաղաքի Քասախի կիրճում գտնվող <ՇԱՀ-ԱՐԵՎԻԿ> ՍՊԸ-ին ծառերի հատում, շիվահատում և սանիտարական էտ կատարելու թույլտվություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

Լ Ս Ե Ց Ի Ն - 1 - *Էդգար Մելիքյանին <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ի տնօրեն նշանակելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը:

Զեկուցողը նշեց, որ համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 9-ի N 2-Ա կարգադրությամբ Էդգար Մելիքյանը նշանակվել է <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:

Հաշվի առնելով այն, որ Է. Մելիքյանն աշխատանքի ընթացքում իրեն դրսևորել է որպես գործունյա և նախաձեռնող աշխատողի, էականորեն բարելավել է համայնքի սանիտարական ու աղբահանության

կազմակերպման վիճակը, այժմ նրա թեկնածությունը ներկայացվում է ավագանուն և առաջարկվում համաձայնություն տալ նրան նշանակելու որպես ՀՈԱԿ-ի տնօրեն:

Զեկուցումից հետո ելույթ ունեցան նիստին ներկա ավագանու բոլոր անդամներն ու տվեցին իրենց համաձայնությունը Է. Մելիքյանին նշանակելու նշված պաշտոնում:

Համայնքի ղեկավարն ամփոփելով ասվածը հույս հայտնեց, որ այսուհետև ևս Է. Մելիքյանը կաշխատի ուժերի լարումով և քաղաքը կպահի սանիտարական պատշաճ վիճակում:

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետի պահանջներով, ընդունվեց համապատասխան որոշում:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ քաղաքի Քասախի կիրճում գտնվող <ՁՈՐ> ՓԲԸ-ին ծառերի հատում, շիվահատում և սանիտարական էտ կատարելու թույլտվություն տալու մասին*

Օրակարգային հերթական հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ Ա. Մնացականյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ համայնքապետարանում ստացված գրության մեջ <ՁՈՐ> ՓԲԸ տնօրինությունը խնդրել էր համաձայնություն տալ ՓԲԸ-ի տարածքում կատարելու չորացած ծառերի հատում, շիվահատում և սանիտարական էտ, քանի որ չորացած ծառերն ու ճյուղերն իրենցից վտանգ են ներկայացնում ինչպես հարակից տարածքներում գտնվող դալար ծառերի ու տնկիների, այնպես էլ հանգստացողների համար:

Զեկուցման մեջ նշվեց, որ թվով 15 վայրի ուռենի, հայկական բարդի և թխկի ենթակա են կտրման, իսկ 7 ծառեր սանիտարական էտման /առկա է մասնագիտական եզրակացությունը /կցվում է//:

Հարցի հետ կապված ելույթ ունեցան Վ. Մկրտչյանը, Տ. Գալստյանը, Վ. Վարդանյանը, Մ. Տաշչյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Հունանյանը, միաժամանակ առաջարկելով կտրված ծառերը հատկացնելու անապահով ընտանիքների:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Ա. Գրիգորյանը, Ա. Մնացականյանը, ՓԲԸ-ի ներկայացուցիչը և Վ. Սաֆարյանը:

Պարզաբանումներ լսելուց հետո առաջարկվեց տալ համաձայնություն նշված թվով ծառեր կտրելու, շիվահատելու և կատարելու սանիտարական էտ:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Աշտարակ քաղաքի Քասախի կիրճում գտնվող <ՇԱՀ-ԱՐԵՎԻԿ> ՍՊԸ-ին ծառերի հատում, շիվահատում և սանիտարական էտ կատարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ Ա. Մնացականյանը:

Զեկուցողը նշեց, որ <ՇԱՀ-ԱՐԵՎԻԿ> ՍՊԸ-ից ստացվել է գրություն-խնդրանք իրենց հանգստյան գոտում գտնվող, հանգստացողների, զբոսաշրջիկների, շրջակա կանաչ ծառերի, կառույցների, ճեմուղիների և այլոց համար վտանգ ներկայացնող չորացած և փտած բներով ծառերը կտրելու թույլտվություն ստանալու խնդրանքով:

Զեկուցումից հետո որոշակի պարզաբանումներով հանդես եկավ ՍՊԸ-ի ներկայացուցիչը և նշեց, որ կտրված և շիվահատված ծառերի փոխարեն տնկվել են ավելի մեծ թվով և հանգստի գոտու համար նախատեսված /տարածքին հարիր/ ծառեր:

Զեկուցողին հարցեր տվեցին և հանգամանալից պատասխաններ ստացան Ս. Օվոյանը, Ս. Շուխյանը, Ա. Զաքարյանը, Ն. Անդրեասյանը, Ա. Սարգսյանը, նորից առաջարկելով փայտը հատկացնելու անապահով և բազմազավակ ընտանիքների:

Որոշակի պարզաբանումներ տվեցին նաև Ս. Սահակյանն ու Զ. Գևորգյանը:

Նիստին ներկա ավագանու անդամները հաշվի առնելով չորացած և փտած բներով ծառերի կիսականգուն գտնվելու փաստը, առաջարկեցին տալ համաձայնություն վտանգն արագ կերպով չեզոքացնելու, ծառահատում և սանիտարական էտ կատարելու համար:

14 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին արտահերթ նիստի աշխատանքներն ավարտեց 2017 թվականի մայիսի 5-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ